

ՀԱՌԱՂԱՆՔ

Մի հայ պանդուխտ պատանու

Ո՛ր իմ հայրենիք, դժբաղդ հայաստան,

Պատանի հոգոյս միակ ապաստան.

Հայ ճակատագրի դու իսկ գաղափար,

Արտասուակից և ցաւակի աշխարհ:

Հոգով ու մարմնով անյազ սիրեցի

Երկրիդ բարեբեր, սուրբդ եկեղեցի.

Անջինջ տառերով առոյգ կուրճքիս վրան

Հուս յիշատակներդ դրոշմուած միշտ կան:

Թէ՛ն իմ առջև գոհարներ, ոսկիք

Փռուած լինէին բիւր և անհամար,

Թէ՛ն զանազան անուշամ խորտիկ

Պատրաստ բերէին օտարք ինձ համար

Հոյակապ շէնքի յորդ խոհանոցից.

Հրապուր ինձ ազդել այս իրք կարող չեն,

Միայն թէ որդիքդ ազատ շունչ քաշեն

Մեր թշուառութեան խիստ կապարանից...

Ո՛հ թէ ինչ տխուր տրտմազգաց մտքով

Անցնում իմ օրեր այս օտար երկրում,

Եւ քեզ տեսնելով քայքայուած կեանքով,

Անվերջ ցաւերով սիրտս է մորմոքում:

Ահա բարբարոսք հրոսակներ կազմած

Վրադ են յարձակում սաստիկ կատաղած,

Քանդում են անխնայ և՛ քաղաք և՛ դեղ,

Էլ վայր չը թողին ոչ տուն և ոչ տեղ...

Անմեղ մանուկներ, կանայք և կուսանք,

Անզօր ծերունիք,— բայց ո՞ր մէկը լանք—

Ջոհ եղան նոցա անգութ զէնքերի,

Էլ ոչ ոք մնաց առանց վէրքերի:

Բազում տաճարներ, սուրբ եկեղեցիք

Կողոպուտ, աւեր եղան հրէշներից,

Եւ դարձեալ նախնեաց սրբազան տեղիք

Ներկուեցան պրեմիա հայ քրիստոնէից...

Եւ այս սոսկալի աւերմունքից յետ

Գրաւեցին նոքա քո բերրի կողմեր,

Բռնի վարուելով քո զաւակաց հետ.
Հալածանք, արսոր՝ ահա բաժին մեր:

Բայց քեզ ի՞նչ կ'օգնեն հառաչանք ու լաց,
Երբ աշխարհն բոլոր՝ ասեա իւրացած,
Լոկ հանդիսատես հայոցս վիճակին,
Անուշադիր է որդւոցդ բողոքին:

Այդ ի՞նչ գատ վիճակ քեզ բաժին հասաւ,
Ո՛վ նուիրական, մարտիրոս երկիր.
Այն որ անիրաւն անիծեց, ասաւ
Որ այդպէս անտէր, ամայի մնայիր...

Արդ, ո՛ւր է Վարդան, ո՛ւր նորա մարդիկ,
Որոնք սուրբ մահուամբ եղան քեզ պաշտպան.
Ո՛ւր հայրենասէր, անձնուէր հոգիք,
Որ քեզ չը թողնեն լքեալ, անպաշտպան:

Եւ սիրովդ վառուած՝ որպէս նոր Վարդան,
Պատաններին խրախոյաներ կարդան.
Հայ արդար դատին լինին նուիրակ,
Որ մենք էլ նրանցից առնենք օրինակ:

Սակայն ի՞նչ ասեմ, երբ հէնց հայերից
Ոմանք՝ կուրացած շահով անձնական,
Քեզ սփոփելու տեղ քո հին ցաւերից,
Նոր վէրք են հասցնում իբրեւ դաւաճան.

Եւ մեզ—պատանեացս՝ փոխան դրդելու
Դէպի միութիւն ի սէր ողջ ազգի,
Պատճառ են դառնում մեզ պառակտելու
Հաճոյանալով անհաշտ այլազգի...

Ես որ մէկն ասեմ՝ սիրտս է ցաւով լիբ,
Կամ որք պատմեմ խօսքերովս անճար.
Քեզ վայել երգիչն, ո՛վ իմ հայրենիք,
Տաղանդ պիտ լինի եթէ չէ հանճար...

Ն. Յ.

Թէև 1872 թուականին և այս ժամանակից էլ առաջ Հայաստանի զանազան կողմերում պատահած տխուր ու սոսկալի-
անցքերի առթիւ օտարութեան մէջ առաւելապէս իմ ստացած
նամակներից ներշնչուած մի գրուած է այս անտիպ ոտանաւո-
րը, սակայն կարծում եմ որ այսօր էլ ժամանակակից կարող
է համարուիլ մեզ համար: